Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Հայկական Հարցը 1918 թվականին, Երևան, «Բարձրագույն դպրոց» հրատ., 1997, 436 էջ։

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի այս աշխատության մեջ քննարկվում են Բրեստ-Լիտովսկի, Տրապիզոնի, Բաթումի կոնֆերանսներում Հայաստանին և Հայկական հարցին վերաբերող հիմնախնդիրները, Բեռլինում, Վիեննայում, Կոստանդնուպոլսում Հայոց Ազգային խորհրդի և Հայաստանի առաջին հանրապետության պատվիրակությունների գործունեությունը, հայ-գերմանական, հայ-ավստրո-հունգարական, հայ-թուրքական և հայ-ռուսական հարաբերությունները, հայերի մայիսյան հերոսամարտերը, Բաքվի պաշտպանությունում հայերի դերը արտացոլող հարցերը։ Դրանց լուսաբանումը կատարվել է Երևանի, Մոսկվայի, Բուդապեշտի, Վիեննայի արխիվներում պահվող փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա։ Հարկ է ասել, որ փաստաթղթերի ու նյութերի մեծ մասը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ։ Գրքում լայնորեն օգտագործվել է նաև գիտական և հուշագրային գրականություն, փաստաթղթերի ժողովածուներ, տվյալ ժամանակի մամուլը։

Աշխատությունն ունի նաև ժամանակակից հնչեղություն։ Գրքի հեղինակը իրավացիորեն մատնանշում է, որ մեր օրերում էլ թուրքական պատմագիտությունը, փոխ առնելով համիդական, երիտթուրքական ու քեմալական քարոզչական մեքենայի վարկածները, խեղաթյուրելով և կեղծելով փաստերը, ենթադրում է Հայկական հարցին վերաբերող խնդիրները։ Ավելին, հրեշավոր ոճրագործությունը՝ մեծ եղեռնը, մատուցում է որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների հետևանք։ Թուրք վայ-պատմաբանները և շատ բարձրաստիճան գործիչներ պնդում են, որ եթե չլինեին այդ շարժումները, չէին լինի կոտորածները։ Առաջ քաշելով «Կովկասյան տուն» պանթուրքական հանցավոր ծրագրերը, նրանք քարոզում են այն միտքը, որ Հայաստանը պետք է հեռանա Ռուսաստանից և կապվի Թուրքիայի հետ, որ հայերը պետք է մոռանան անցյալը։ Ի պատասխան սրան աշխատության հեղինակը գրում է. «Մոռանալ անցյալը, հրաժարվել, զրկվել պատմական հիշողությունից, նշանակում է կորցնել հավատը արդարի նկատմամբ։ Պետք է մենք հստակորեն ասենք, որ հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում եղել են օսմանիզմի, համաթուրքիզմի, երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության հետևանք, որ ֆիզիկական և կամավորական շարժումները հայ ժողովրդի պատմական տենչերի ու ազգային ազատագրական ձգտումների, բռնության դեմ ցասման ինքնաբուխ արտահայտությունն են, քաղաքական և սոցիալական ազատագրության ազդակ» (էջ 25)։ Ուսումնասիրության սկզբում նորահայտ փաստաթղթերով ու նյութերով ցույց է տրված Ռուսաստանում ինքնակալության տապալումից հետո ժամանակավոր կառավարության ղիրքորոշումը Հայկական հարցում։ Ժամանակավոր կառավարության 1917 թ. ապրիլի 25-ի (մայիսի 6) որոշմամբ Արևմտյան Հայաստանի համար հաստատվում էր նոր կարգավիճակ, որով տարածքի կառավարման կոմիսար էր նշանակվում գեներալ Ավերյանովը, տեղակալ՝ հայ ազգային գործիչ Հակոբ Զավրիյանը։ Գրքում բերված է ռազմական և ծովային նախարար Ա. Կերենսկու մտահոգությունը ռուսական զորքերը այդ տարածաշրջանում թողնելու վերաբերյալ։ «Մենք չենք կարող հեռանալ Հայաստանից, որովհետև այդ ժամանակ Հայաստանից ոչինչ չի մնա։ Նա կկորչի քրդերի ու Թուրքերի հրի ու սրի տակ»—նշել է նա։ Նման մոտեցումը պաշտպանում էր նաև Գ. Պլեխանովը (էջ 18)։ Գրքում հանդամանորեն լուսաբանված է հայ ազգային կուսակցությունների ղիրքորոշումը։ Հեղինակը բարձր է գնահատում «Թուրքահայաստանի մասին» Ռուսաստանի ժողկոմխորհի հրովարտակը։ «Հրովարտակի ընդունումը փաստորեն 1915 թ. Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում թուրքական ոճրագործների իրականացրած հայերի ցեղասպանության դատապարտում էր։ Խորհրդային Ռուսաստանը հայտնում էր իր կամքը՝ օգնել հայրենի տնից բռնի ուժով տեղահանված և աքսորված հայ ժողովրդի տառապյալ բեկորներին վերադառնալ երկիր, ստեղծել անկախ ժողովրդավարական հայկական պետականություն» (էջ 73)։ Ի դեպ այդ մեծ փաստաթղթի մասին իր ծանրակշիռ խոսքն է ասել զորավար Անդրանիկը։ Նա

ժողկոմխորհի հրովարտակը բնութագրել է որպես «արդարության և քաղաքական անկեղծության արտահայտություն»։

Համակողմանիորեն բացահայտված են Բրեստ-Լիտովսկի հաշտության հետ կապված կարևոր հարցերը։ Հաշտության բանակցությունները խորհրդային Ռուսաստանի և քառյակ դաշինքի երկրների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Թուրքիայի միջև սկսվեցին գերմանական զորքերի կողմից գրավված Բրեստ-Լիտովսկում 1917 թ. դեկտեմբերի 22-ին և անցնելով երեք փուլ, ավարտվեցին 1918 թ. մարտի 3-ին։

Բանակցությունների առաջին փուլում Ռուսաստանի պատվիրակության կազմում էին Ա. Իոֆֆեն (ղեկավար), Լ. Կամենևը, Ա. Բիցենկոն, Մ. Պոկրովսկին, Լ. Կարախանը (քարտուղար), Մ. Պավլովիչը (խորհրդական)։ Գերմանիայի պատվիրակությունը ղեկավարում էր արտաքին գործերի նախարար ֆոն Քյուլմանը, Ավստրո-Հունգարիայինը՝ արտաքին գործերի նախարար Օ. Չերնինը, Բուլղարիայինը՝ արդարադատության նախարար Պոպովը, Թուրքիայինը՝ մեծ վեզիր Թալեաթ փաշան։ Խորհրդային կողմը առաջարկում էր հաշտություն առանց տարածքների բռնազավթման, դաշնաքառյակ դաշինքը նպատակ էր դրել Ռուսաստանից մեծ տարածքներ խլել Արևմուտքում և Կովկասում։ Նկատի էր առնվում Թուրքիային բռնակցել հայկական վիլայեթները՝ Կարսն ու Արդահանը։

Բանակցությունների երկրորդ փուլը սկսվում է 1918 թ. հունվարի 9-ին և շարունակվում է մինչև փետրվարի 10-ը։ Խորհրդային պատվիրակության ղեկավարը Լ. Տրոցկին էր։ Խորհրդականի կարգավիճակով Վ. Ի. Լենինի ստորագրությամբ մանդատ էր ստացել Վ. Տերյանը, որը համապատասխան նյութեր պետք է ներկայացներ Հայկական հարցի վերաբերյալ։

Հաշտության բանակցությունների երկրորդ փուլի ավարտից երեք օր անց, 1918 թ. փետրվարի 13-ին Թուրքական զորքերը ուխտադրուժ հարձակման անցնելով գրավում են Երզնկան, այնուհետև Բարեբերդը և այլ հայկական տարածքներ։ Բրեստ-Լիտովսկի բանակցությունների երրորդ փուլը սկսվում է 1918 թ. մարտի 1-ին։ Խորհրդային պատվիրակության ղեկավարը Գ. Սոկոլնիկովն էր։ Պատվիրակության կազմում էին Գ. Պետրովսկին, Գ. Չիչերինը, Լ. Կարախանը, Ա. Իոֆֆեն։ Ընդամենը մի քանի օր տևած այդ փուլն ավարտվեց նրանով, որ 1918 թ. մարտի 3-ին ստորագրվեց բացահայտ անարդարացի պայմանագիրը։ Դրանով Կարսի և Արդահանի տարածքները անցնում էին Թուրքիային։ Վերլուծելով այն, ինչ կատարվեց 1918 թ. մարտի 3-ին, Լ. Տրոցկին ասել է, որ «Բրեստի դաշնագիրը աղետ է հայ ժողովրդի համար և երջանիկ եմ, որ ես ստիպված չեղա ստորագրել դա» (էջ 101)։

Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի սարսափելի ստորագրումից հետո սկսվեցին նոր բանակցություններ, որոնք տեղի ունեցան Տրապիզոնում։ Բանակցությունների սկսվելուց 7 օր առաջ, 1918 թ. մարտի 8-ին օսմանյան կառավարությունը՝ ի դեմս էնվեր փաշայի, Անդրկովկասյան կառավարություններից պահանջեց անհապաղ զորքերը դուրս բերել Բաթումից, Արդահանից, Կարսից։ Նույն ժամանակ Վեհիբ փաշան 1լ հայտարարեց, որ «խեղճ մուսուլմաններին հայերի «զազանություններից» փրկելու համար պետք է «որքան հնարավոր է առաջ ձեռնարկել այդ շրջանների ազատագրումը» (էջ 112)։ Ինչպիսի՞ կեղծիք։ Եվ ահա այդպիսի մթնոլորտում, 1918 թ. մարտի 12-ին Տրապիզոնում տեղի ունեցան Թուրքական և անդրկովկասյան կառավարությունների առաջին հանդիպումները։ Պաշտոնական նիստերը սկսվեցին մարտի 14-ին, սակայն Թուրքական թելադրանքի և Թուրքական զորքերի՝ Անդրկովկաս ներխուժելու սպառնալիքի պայմաններում համաձայնության հասնելը անհնարին էր, ուստի Սեյմը որոշեց անդրկովկասյան պատվիրակությանը հետ կանչել Թիֆլիս։ Տրապիզոնի բանակցություններն ընդհատվեցին։

Գրքում ցույց է տրված Հայկական առանձին բանակային կորպուսի կազմավորման գործընթացը, լուսաբանված են հայ ազգային կազմակերպությունների ներկայացուցիչների Ալեքսանդրապոլի խորհրդակցության նյութերը։ Հեղինակը բնութագրել է Անդրկովկասի անկախության հռչակման հանգամանքները, երիտթուրքերի և մուսափաթի խժդժությունները երկրամասում։

Հ. Ավետիսյանը իր մենագրության մեջ կարևոր տեղ է հատկացրել հայության մայիսյան հերոսամարտերին, Հայաստանի առաջին հանրապետության ծննդին և Բաթումի պայմանագրին։ Բնութագրելով Բաթումի կոնֆերանսը (1918 թ. մայիսի 11-ից մինչև հունիսի 4), իրավացիորեն նշում է, որ այնտեղ տեղի ունեցած «բանակցությունները, ընդունված փաստաթղթերը նորից հաստատեցին այն ճշմարտությունը, որ համաշխարհային պատմության մեջ դրեթե չկա մի պետություն, որն այնքան դաշնապանց լինի ինչպես Օսմանյան կայսրությունը»։ Բաթումի բանակցություններում Գերմանիայի պատվիրակությունը ղեկավարում էր գեներալ ֆոն Լոսովը, օսմանյան պատվիրակությունը՝ Հալիլ Բեյը, Անդրկովկասյան Հան-

բապետության պատվիրակությունը՝ Ա. Ջխենկելին (պատվիրակության կազմում էին նաև Հ. Քաջազնունին և Ա. Խատիսյանը)։ Բնութագրելով Բաթումի բանակցություններն ու պայմանագիրը, նշվում է, որ այսպես կոչված «անկախության, բարեկամության, հավերժ խաղաղության» հավակնող այդ փաստաթղթով հայերին էր թողնվում հարիվ 9 հազար քառակուսի վերստ տարածություն Արարատի և Սևանի միջև։ Դրանով Թուրքիան տիրապետող դիրք էր գրավում Անդրկովկասում, և նպատակ ուներ բացարձակ կողոպուտի ենթարկել Կովկասը ու հասնել հայերի բնաջնջմանը ամբողջ Անդրկովկասում։ Թուրքական կողմը բանակցությունները համարում էր հարցի լուծման մի մասը։ Թուրքական զորքերը շարունակում էին իրենց սանձարձակ հարձակումները հայկական քաղաքների ու գյուղերի վրա։ Արդեն 1918 թ. մայիսի 15-ին նրանք գրավել էին Ալեքսանդրապոլը։ Այդ ժամանակ, ինչպես գրում է հեղինակը, «դաժան փորձությունների դիմակայած, պատմության քառուղիներում իր ինքնությունը, լեզուն, մշակույթը, պատիվն ու ազգային ինքնագիտակցությունը և ինքնաճանաչումը պահպանած հայ ժողովուրդը այլևս նահանջելու տեղ չուներ» (էջ 213)։

Գրքում նորահայտ փաստերով լուսաբանված են հայերի մայիսյան հերոսամարտերը։ Պատասխան է տրվում այն հարցին, թե ինչո՞ւ զորավար Անդրանիկը անմիջականորեն չմասնակցեց այդ հերոսամարտերին և կոնկրետ՝ Ղարաբիլիսայի հերոսամարտին։ Հեղինակը բերում է Հ. Թումանյանի հետևյալ փաստարկը. «Ղարաբիլիսայի անկման օրից սկսած՝ անդադար մարդիկ են պատահում, որոնք դատապարտում են Անդրանիկին, որ Ղարաբիլիսայի ժամանակ նա՝ բոլոր ուժերով, մնաց էնքան մոտիկ Դսեղ նստած, մինչդեռ եթե օգնության հասներ Դվալից, պատերազմը բոլորովին ուրիշ ելք կունենար։ Այո, միանգամայն ճշմարիտ են ասում, որ եթե Անդրանիկը Լոռու կողմից՝ Դվալից օգնության հասներ, պատերազմը, անկասկած, ուրիշ ելք կունենար։ Սակայն բոլոր խոսողները մի բան չգիտեն, որ հենց Լոպես էլ ծրագրված էր և կատարվելու վրա էր, երբ դինվորական բարձր հրամանատարությունից հրահանգ եկավ Անդրանիկին մնալ Դսեղ և պաշտպանել երկաթուղու դիծը։ Մինչև էս հրամանը փոխվեց՝ արդեն 3-րդ օրն էր և գրեթե միաժամանակ, եկավ Ղարաբիլիսայի անկման բոթը» (էջ 233—234)։

Մենագրության վերջին գլխում՝ «Հայկական հարցը 1918 թ. երկրորդ կեսին», պարզաբանված է Հայաստանի Առաջին Հանրապետության պատվիրակությունների բուռն գործունեությունը Բեռլինում, Վիեննայում և Կոստանդնուպոլսում։ Բեռլինում մնալով մոտ 5 ամիս (1918 թ. հունիսի 3-ից մինչև նոյեմբերի սկզբները) հայկական պատվիրակությունը 12 հուշագիր է ներկայացնում Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը, 9-ը հուշագիր՝ Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարությանը։ Պատվիրակությունների աշխատանքներում ներգրավվել էին Հայկական հարցի դիտակներ Գրինֆիլդը, Մարկվարտը, Արսլֆելդը, Ռիխտերը, Շվեյցարիայում գտնվող Ա. Խսահակյանը և ուրիշներ։ Անհերքելի փաստերով գրքում մերկացվում են երիտթուրքերի և մուսավաթի հակահայկական ոճրագործությունները Անդրկովկասում։ Ցույց են տրվում պանթուրքական հանցավոր ծրագրերի իմաստն ու ուղղությունները, մերկերված են թուրք հեղինակի հետևյալ խոսքերը՝ տպագրված «Հիլալ» Ահմեդ թերթում (1918 թ. հունիսի 29-ին)։ «Ուզում եմ մի բանի խոսք ասեմ այն երկրի մասին, որի գրոշը չի տարբերվում թուրքերի գրոշից։ Դա Կովկասյան Ադրբեջանն է՝ «Ադրբեջանի հանրապետությունը» կամ ավելի հիշատ ասած «թուրք թագավորությունը Կովկասում» (էջ 282)։

Հեղինակի աչքից չի վրիպել հայերի մասնակցությունը Բաքվի պաշտպանությանը և այլ խնդիրներ։ Առանձին հետաքրքրություն են ներկայացնում պատմական էքսկուրսի վրա հիմնված այն մեկնաբանությունները, որ տրվել են Սևրի, Ալեքսանդրապոլի, Մոսկովյան պայմանագրերին և այլ իրադարձությունների, որոնք հասցվում են մինչև 1945 թ. Պոտսդամի կոնֆերանս, ուր խորհրդային պատվիրակության կողմից առաջ քաշվեցին 1921 թ. Հայաստանից խլված տարածքների վերադարձման հարցերը։

Մենագրության մեջ ընդգծված է հայերի ռուստկան կողմնորոշման կարևոր, առաջադիմական նշանակությունը հայ ժողովրդի ճակատագրում։

Հրանտ Ավետիսյանի աշխատությունը նոր, լուրջ ավանդ է Հայկական հարցի դիտական լուսաբանման գործում։ Այս արժեքավոր աշխատությունը եզրափակվում է Մեծն Ռաֆֆու իմաստուն խոսքերով. «Պատմությունը մի վարդապետարան է; որի մեջ ապագա սերունդը կրթվում է, զգուշանալով իր նախնյաց սխալներից և հետևելով նրանց լավ գործերի օրինակներին»։

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ